

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԸՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

**ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԱՅԼ
ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՐԶԱԳՐՎԱԾ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԵՎ
ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐԸ
(XIV-XIX ԴԴ.)**

Շամախու հայոց թեմի գրչության օջախներում ոչ միայն ընդօրինակվել են ձեռագիր բազմաթիվ մատյաններ, այլև գրատներում պահել, կորստից փրկել և մեզ են հասցրել գրչության այլ վայրերում ընդօրինակված (Սպահան, Թիֆլիս, Բաքերդ, Արցախ, Գողթան, Նոր Զուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա և այլն), նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաթիվ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրատանը:

Ստորև բերում ենք ցարդ մեզ հայտնի ցանկը՝ հիմք ընդունելով Մակար վրդ. Բաբխուդարյանցի և մասնավորապես Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կողմից 1888 թ. կազմված ցուցակում պահպանված վկայակոչումները, դրանց ավելացնելով այլ աղբյուրներից ևս քաղված տվյալներ: Ձեռագրերի ցանկը դնում ենք ըստ գյուղերի՝ ժամանակագրական կարգով:

Ըստ այսմ.

Գյուղ Ղալակա. Ս. Աստվածածին եկեղեցի

«Աւետարան», կոչվել է նաև «Կարմիր Աւետարան» - Ժամանակ՝ ՋԼԲ (1483), վայրն անհայտ է, գրիչ՝ Խունկ: Հիշատակարանում գրված է. «...Արդ ես անարժան և անպիտան անուամբ Խունկ կոչեցեալ և ի վարս և ի հոտս և ի համս դառն... և անարգ ի գործս քահանայութեան... գրեցի... Աւետարանս ի թվին Հայոց ՋԼԲ»¹: Նկարագրության պահին Ավետարանը եղել է Ղալակա գյուղի Տեր Ներսես քահանայի տանը²: 1893 թ. հոկտեմբերի 8-ին եկեղեցում բռնկված հրդեհի պատճառով ձեռագիրն այրվել է³:

«Աւետարան» - Ժամանակ՝ ՌԺԳ (1564), վայր՝ Անուգ Հաւայտուն Հենգուգակ, Ս. Հակոբ վանք (Արցախի Խաչեն գավառ), գրիչ՝ Աբեթ: Հիշատակարանում գրված է. «...Գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ փրծում և բազմամեղ գրչի և սուտանուն վարդապետ Աբեթի ի

¹ Տե՛ս Մակար եպս. Բաբխուդարեանց, Աղուանից երկիր ևս դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 208: Նման. Մեսրոպ արքեպս. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Սրնիփաննոսի վանաց Սաղիանի ևս միս լանթից և ուխտաբեղեց ևս ևս բաղաբացն ևս գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի, Տիֆլիս, 1896, էջ 243:

² Սմբատեան Մեսրոպ արքեպս., Նկարագիր Սուրբ Սրնիփաննոսի վանաց Սաղիանի, էջ 243:

³ Տե՛ս Արասխանեանց Ա., Ղալազ գիւղը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, թիվ 10, էջ 1597:

գեղա Անուգ Հաւայտուն Հնգուգակ ի դուռն սուրբ եկեղեցու, ուր մասն Պանդալիոն բժշկի
և սրբոցն, որ աստ կան հաւաքեալ ի հայրապետութեան տանն Աղուանից Տէր Գրիգորիսի, ի
ղանդութեան Ծախ Թամազի, ի թուականութեան հայ տոմարիս ՌԺԳ.⁴ Նկարագրության

պահին Ավետարանը գտնվել է Ղալակա գյուղի Տէր Սարգիս քահանայի տանը⁵։
«Աւետարան» - Ժամանակ՝ ՌԺԺԴ (1665), վայր՝ Փառակա (Գողթան գավառ)⁶, գրիչ՝ Ղա-
զար երեց։ Հիշատակարանում գրված է. «...Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի գեաղոս, որ
կոչի Փառակայ ի գաւառն Գողթան ընդ հովանեաւ սուրբ Ծոմա (իմա՝ Ս. Ծմալոն եկեղե-
ցին - Գ. Ստ.) եկեղեցոյ ի թուաբերութեան Ասքանազեան և Արեթական տոմարի ՌԺԺԴ,
ցին - Գ. Ստ.) եկեղեցոյ ի թուաբերութեան Ասքանազեան և Արեթական տոմարի ՌԺԺԴ,
յամսեանն փետրվարի, ձեռամբ անարժան Ղազար երիցոյ»⁷։ Նկարագրության պահին
այս Ավետարանը ևս գտնվել է Ղալակա գյուղի Տէր Սարգիս քահանայի տանը⁸։ Ձեռագի-
րը հետագայում, 1712 թ., կազմել է տիրացու Բարսեղը⁹։

«Մաշտոց» - Ժամանակ՝ ՌԺԼԳ (1684), վայր՝ Ծատին վանք, գրիչ՝ Հակոբ Ջուղայեցի¹⁰։
Հիշատակարանում ասված է. «Եւ Ջուղայեցի մահտեսի Յակոբ վաճառականս որ կրօնա-
ւորեաց Ծատիկոյ յանապատին, բազում սիրով, յուսով և հաւատով, բախմամբ սրտի կա-
մեցալ Մաշտոցս գրել ի մտի ունելով գանձս Աստուածայինս զբանն մարգարէին որ
ասէ՝ «Երանի, որ ունիցի գաւակ ի Սիօն և ընտանի յերուսաղէմ»... ի թվականին հայոց հա-
զար ԺԼԳ ամի (1684) գրեցաւ Մաշտոցս ի մէջ Ծատիկոյ յանապատին՝ ձեռամբ Յակոբ
վաճառականին, մեղայապարտ կրօնաւորին...»¹¹։

⁴ Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 208: Հմմտ. Սմբարեան Մ., Նկարագիր Սուրբ
Սրբիաննոսի վանաց Սաղիանի, էջ 243:

⁵ Սմբարեան Մ., Նկարագիր Սուրբ Սրբիաննոսի վանաց Սաղիանի, էջ 243: Ձեռագրի հետագա ճակա-
րագիրն անհայտ է:

⁶ Փառակա գյուղը եղել է Գողթան գավառի նշանավոր բնակավայրերից մեկը: Գյուղի Ս. Գևորգ կամ Ջորա-
վանքի անապատը, Ս. Եղիա Մարգարե, Ս. Հակոբ-Հայրապետ, Ս. Ծմալոն և Ս. Սրբիաննոս եկեղեցիներն ու
վանքերը եղել են նշանավոր զբոսայիսներ: Պահպանված ձեռագրերը վերաբերվում են XV-XVII դդ.(երևն Այ-
վազյան Ա., Նախիջևան. Բնաշխարհիկ պատկերագրող հանրագիտակ, Երևան, 1995, էջ 97-98):

⁷ Տե՛ս Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 208: Հմմտ. Սմբարեան Մ., Նկարագիր
Սուրբ Սրբիաննոսի վանաց Սաղիանի, էջ 243, նույնի՝ Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երեջակայ և շրջա-
կայից նորա (1897-1904), Տիփսիս, 1904, էջ 137, 196, որն նաև Այվազյան Ա., Նախիջևան. Բնաշխարհիկ պատ-
կերագրող հանրագիտակ, էջ 210:

⁸ Սմբարեան Մ., Նկարագիր Սուրբ Սրբիաննոսի վանաց Սաղիանի, էջ 243:

⁹ Տե՛ս Այվազյան Ա., Նախիջևան. Բնաշխարհիկ պատկերագրող հանրագիտակ, էջ 210: Ձեռագրի հետա-
գա ճակագրագիրն անհայտ է:

¹⁰ Հակոբ Ջուղայեցին սկզբնապես գրադվել է վաճառականությամբ, հետագայում թողնելով այն դարձել է
հոգևորական, որպես միաբան ծառայության անցնելով Շապին վանքում՝ իր միջոցները ի նպաստ դնելով վանքի
մշակութային և փրկարարական բարգավաճման գործին: Նրա մեկնաւորությամբ 1655 թ. սրբապաշ բարերով կա-
ռուցվել է վանքի Ս. Սիօն բազիլիկ եկեղեցին: Շապին վանքը եղել է Վայոց ձորի զբոսության նշանավոր կենտրոն-
ներից: Այդտեղ զբոսաբերված ձեռագրերի մի մասի հեղինակը եղել է Հակոբ Ջուղայեցին (երևն Հասարայան Մ.,
Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 27-28):

¹¹ Տե՛ս Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երեջակայ և շրջակայից նորա, էջ 198, 199: Ձեռագիրն այժմ
գտնվում է Մաշտոցի անվան Մարենկո-Պարանյան: Մուրթ է գործել 1903 թ. Խաչիկ վրդ. Դադյանի հավաքածուի
կազմում և պահպանվում է N 3947 թվահամարի ներքո (երևն Եգանյան Օ., Մարտիկ արքեպ. Սմբարյանի
«Նկարագիր Շամախոյ թեմի» գործում հիշարարված ձեռագրերը, «Էջմիածին», 1970, հունվար, էջ 47):

Գյուղ Հնդար. Ս. Աստվածածին եկեղեցի

«Աւետարան» - Ժամանակ՝ ԶԼԹ(1490), վայր՝ Սանահինի վանք, գրիչ՝ Արիստակես վարդապետ, ստացող՝ Ուստա Մեսրոպ Բաբայան: Հիշատակարանում գրված է. «Ի թուականիս Հայոց ԶԼԹ (1490) ի դառն և ի չար ժամանակիս, որով նեղիմք յանօրինաց, գրեցաւ Աւետարանս ձեռամբ ումեմն Արիստակես վարդապետի, ի վանս Սանահինի, յառաջնորդութեան Բարսեղ եպիսկոպոսի, արդեամբք ստացողի սորա ուստա Մեսրոպ Բաբայան»¹²:

Գյուղ Կարմախան. Ս. Աստվածածին եկեղեցի

«Աւետարան» - Ժամանակ՝ ՌՈՄԵ (1655), վայր՝ Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա)¹³ քաղաք, գրիչ՝ Նիկողայոս: Հիշատակարանում գրված է. «Գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ մուսստ և յետին գրչի Նիկողայոսի ունայնագործ մելանաւորի ի թուաբերութեանս Ասքանազեան և Աբեթեան տումարի ՌԺԴ և ըստ մորումս շրջանի ԼԹ. և գալստեան Կեմարարին ՌՈՄԵ (1655)»¹⁴:

«Քարոզգիրք» - Ժամանակ՝ ՌՄԼԶ (1787), վայր՝ Արցախի Գյուլիստան կամ Թալիշ գավառ, գրիչ՝ Հովհաննէս տիրացու, ստացող՝ Սողոմոն վարդապետ: Հիշատակարանում գրված է. «Յիշատակ է այս Քարոզգիրքս Մեծ Ծիմացի Տէր Մելիքսէթի որդի Սողոմոն վարդապետին. գրեցաւ առ դրան Սրբոյն Ուրեկայ, աշակերտ մորին Տիրացու Յովհաննէս, որ է եղբորորդի: Ով կարդայ, լիաբերան ողորմի ասէ. թվին ՌՄԼԶ. մայիսի Դ ին»¹⁵: Նկարագրության պահին եղել է Կարմախան գյուղի Ալեքսանդր քահանայի տանը¹⁶:

Գյուղ Մատրասա. Ս. Աստվածածին եկեղեցի

«Աւետարան» - Ժամանակ՝ ՌԺԴ (1605), վայր՝ Մոկաց գավառ՝ Հիզան, գրիչ՝ Հովհաննէս քահանա: Հիշատակարանում գրված է. «Եւ արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի գաւառս Մոկաց, ձեռամբ Յովհաննէս քահանային և ծաղկեցաւ ի քաղաքս խիզան, ձեռամբ խաչատուրի տգէտ Քահանայիս. շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ Նորին կատա-

¹² Տե՛ս **Բաթիումարեանց Մ.**, Աղուանից երկիր ևս դրացիք, էջ 182: Վճմբ. **Մմրաբնան Մ.**, Նկարագիր Սուրբ Սրբփաննոսի վանաց Սաղիանի, էջ 241: Ձեռագրի հնարագա ճակարագիրն անհայտ է:

¹³ Դրիմախայոց գրչօջախներից ամենանշանավորը եղել է Կաֆան, ուր XV-XVIII դդ. միաժամանակ գործել են ավելի քան երեք փասնյակ հայկական եկեղեցիներ: Քաղաքի Ս. Սարգիս, Ս. Երորդդոթյուն, Ս. Աստվածածին և այլ եկեղեցիների հայ գրիչներն ու ծաղկողները սերունդներին են թողել բազմաթիվ ձեռագրեր (փրճ. **Միքայելյան Վ.**, Դրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 296, փրճ. նաև Լույսի՝ Դրիմախայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր), Երևան, 2000, էջ 13):

¹⁴ Տե՛ս **Բաթիումարեանց Մ.**, Աղուանից երկիր ևս դրացիք, էջ 192: Վճմբ. **Մմրաբնան Մ.**, Նկարագիր Սուրբ Սրբփաննոսի վանաց Սաղիանի, էջ 241-242: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղաբանում: Մուրբ է գործել 1959 թ. երևանաբնակ Գուրգեն Ավագյանից և պահպանվում է N 9798 թվահամարի ներքո (փրճ. **Եզանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Մմրապյանի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

¹⁵ Տե՛ս **Բաթիումարեանց Մ.**, Աղուանից երկիր ևս դրացիք, էջ 192: Վճմբ. **Մմրաբնան Մ.**, Նկարագիր Սուրբ Սրբփաննոսի վանաց Սաղիանի, էջ 246:

¹⁶ **Մմրաբնան Մ.**, Նկարագիր Սուրբ Սրբփաննոսի վանաց Սաղիանի, էջ 247: Ձեռագրի հնարագա ճակարագիրն անհայտ է:

րեցաք ի մեծ թուականիս Հայոց ՌԾԴ (1605) ի Հայրապետութեան Էջմիածնայ Տեառն Տէր Գրիգորիսի Ուրփայեցոյ և ի մերոյս Աղթամարայ Տեառն Տէր Գրիգորիսի, թագաւորութեան ալլազգեաց Սուլթան Մահմատ խոնդարին...»¹⁷:

Գյուղ Զարխու (Զարխուշեն)

«Մեկնութիւն Սաղմոսաց» - Բերված է եղել Պարսկաստանի Փերիա գավառից¹⁸: Ստացող՝ Ուստա Խաչիկ: Հիշատակարանում գրված է. «Յիշատակ ուստա Խաչիկին, որ էր ուստա Աւետէն, որ կոչի Փոքր Աւետ. Աստուած իւր մեղացն թողութիւն շնորհէ, որ ստացաւ սուրբ մեկնիս հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց, իօրն Տէր Կարապետին և մօրն՝ Գնդկի, կողակից Գուլին, թվին ՌժԾԸ (1609) ունն»¹⁹: Հնատիպ այս ձեռագիրի լուսանցքներում կան ՌժՀ (1621), ՌժԶԶ (1637), ՌՄՀԶ (1827) թվականների հիշատակագրություններ²⁰:

Թեմը մեծ գրատուն է ունեցել մաս հայ մշակույթի միջնադարյան կենտրոն հանդիսացող առաջնորդամիստ Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքում, որ ընդհուպ մինչև XIX դարի վերջերը նույնպես պահվել և ոչնչացումից փրկվել են Հայաստանի գրչության այլ վայրերում ընդօրինակված մեծ թվով ձեռագրեր՝ Ավետարաններ, Տաղարաններ, Բարոզգրքեր, Ծարականոցներ և Մաշտոցներ, տպագիր գրքեր ու դասագրքեր: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կողմից 1888 թ. կազմված վանքի սեփականության գույքացուցակում թվարկվում են հետևյալ ձեռագրերը.

«Մեկնութիւն Գիրք Սահմանաց Դարթի գրչեայ» - Ժամանակ՝ ՌժԾԹ (1710), վայրն անհայտ է, գրիչ՝ Միմաս վարդապետ²¹:

«Մեկնութեան գրոցն Պրոկդի Փիլիսոփայի» - Ժամանակ՝ ՌժՀԵ (1726), վայրն անհայտ է, գրիչ՝ Միքայել վարդապետ²²:

¹⁷ Տե՛ս Բաթխուպարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 167-168: Հմմտ. Սմբատյանց Մ., Ակարագիր Սուրբ Սրբեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 240-241, տե՛ս նաև նույնի՝ Ակարագիր Սուրբ Կարապետի վանից երեւակայ և շրջակայից նորա, էջ 271: Ձեռագիրն այժմ գտնվում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկչյան վանքի գրաւորանք և պահպանվում է N 690 թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Ակարագիր Ծամախոյ թմի» գրքում հիշարկված ձեռագրերը, էջ 45):

¹⁸ Շահ Աբրահամ Ա-ի կողմից 1605 թ. Իրան բռնազաղթված հայերը Սպահանից բացի բնակեցվել էին նաև Փերիա և այլ գավառներում: Դավրիժեցին թվարկում է հետևյալ գավառները. «...բնակեցուցին՝ ի Լեջան, և յԱլեջան, ի Գանդիման, և ի Ջոխտո, ի Փարիայ, և ի Բուրվարի. և անդէն բնակեցան, և կային մինչև ցայսօր» (Առաքել Դավրիժեցի, Գիրք պարմութեանց, աշխարասիրութեանմը՝ Լ. Խանկարյանի, Երևան, 1990, էջ 82):

¹⁹ Տե՛ս Բաթխուպարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 173: Հմմտ. Սմբատյանց Մ., Ակարագիր Սուրբ Սրբեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 244-245:

²⁰ Նույն տեղում: Ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

²¹ Տե՛ս Սմբատյանց Մ., Ակարագիր Սուրբ Սրբեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 63: Ձեռագիրն այսօր գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրթ է գործել 1893 թ. Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի միջոցով, Խրիմյան Հայրիկի կաթողիկոսական օժման հանդեսի ժամանակ սրացված նվերների շարքում և պահպանվում է N 3329 թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի «Ակարագիր Ծամախոյ թմի» գրքում հիշարկված ձեռագրերը, «Էջմիածին», էջ 47):

²² Տե՛ս Բաթխուպարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 157, 177: Հմմտ. Սմբատյանց Մ., Ակարագիր Սուրբ Սրբեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 63, 246: Հմմտ. Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենա-

«Մեկնություն գրոցն Պրոկդի Փիլիսոփայի» - ժամանակ՝ ՌՄԾԲ (1803), վայրն անհայտ է, գրիչ՝ Սիմեոն եպիսկոպոս Գառնեցի (Մակար վրդ. Բարխուդարյանցի մոտ՝ Գանձակեցի)²³:

«Շարակնոց ձեռաց» (առանց հիշատակագրության)²⁴:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)²⁵:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)²⁶:

«Շարակնոց» (առանց հիշատակագրության)²⁷:

«Ժամագիրք Ատեմի» - ժամանակ՝ ՌԺԾԼ (1708), վայրն անհայտ է, գրիչ՝ Եփրեմ դպիր, պատվիրատու՝ Օհան քահանա Ջուղայեցի²⁸:

«Մաշտոց» - ժամանակ՝ ՌԹ (1560), վայր՝ Խանձք գյուղ²⁹, Ս. Հակոբ վանք, գրիչ՝ Հովհաննես արքեպ. Հիշատակարանում գրված է. «Արդ գրեցաւ տառս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարուեստ և փծում գրչի Յովհաննէս արքեպիս. անուամբս միայն և գործովս ոչ, ի դուռն Սուրբ Աթոռոյն Յակոբայ վանիցս և ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեն, ի գիւղս, որ կոչի Խանձք ի Հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և Արհ եպիսկոպոսին Առստակէսին, և իշխանատր տեղոյս Մեհրապ պէկին, և աշխարհակալ Շահ Դամահին... ի թվիս Հայոց ՌԹ»³⁰: Նկարագրության պահին եղել է Սաղիանցի

դարակի, կազմեցին՝ Օ Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Խ. Ա. Երևան, 1965, էջ 1130: Ձեռագիրն այսօր գտնվում է Մաշտոցի անվան Մարենադարանում: Մուրբ է գործել 1893 թ. Մեսրոպ արքեպ. Սմբարյանցի միջոցով, Խրիմյան Հայրիկի օժան հանդեսի ժամանակ ստացված ավերների շարքում և պահպանվում է N 2573 թվահամարի ներքո (տե՛ս Եզանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբարյանցի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշարկված ձեռագրերը, էջ 47):

²³ Տե՛ս Բարխուդարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 177: Հմմտ. Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սյրեփանեսի վանաց Սաղիանի, էջ 63, 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենադարանում: Մուրբ է գործել 1912 թ. և պահպանվում է N 4013 թվահամարի ներքո (տե՛ս Եզանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբարյանցի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշարկված ձեռագրերը, էջ 47):

²⁴ Տե՛ս Բարխուդարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 177: Հմմտ. Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սյրեփանեսի վանաց Սաղիանի, էջ 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենադարանում: Մուրբ է գործել 1888 թ. Մեսրոպ արքեպ. Սմբարյանցի միջոցով և պահվում է N 3220 թվահամարի ներքո (տե՛ս Եզանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբարյանցի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշարկված ձեռագրերը, էջ 47):

²⁵ Տե՛ս նույն տեղում: Ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

²⁶ Տե՛ս նույն տեղում: Ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

²⁷ Տե՛ս նույն տեղում: Ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

²⁸ Տե՛ս Բարխուդարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 176: Հմմտ. Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սյրեփանեսի վանաց Սաղիանի, էջ 246: Ձեռագրի հետագա ճակատագիրն անհայտ է:

²⁹ Խանձք-Խանցկ գյուղը գտնվում է Արցախի Խաչեն գավառում՝ Ասկերանի շրջանում: Գյուղի Ս. Սյրեփանես կամարակալ քարաշեն եկեղեցին կառուցվել է 1673 թ. հին եկեղեցու ավերակների վրա: Եղել է գրչության արդյունաբեր կենտրոն (տե՛ս Բարխուդարյանց Մ., Արցախ, Բազում, 1895, էջ 158-159, տե՛ս նաև Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Սր., Բաբսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների փոխանությունների բառարան, հր. Բ. Երևան, 1988, էջ 651-652):

³⁰ Բարխուդարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 177: Հմմտ. Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սյրեփանեսի վանաց Սաղիանի, էջ 245-246:

վարժապետ Նիկոլայ Քալաշյանցի տանը³¹:

«Տաղարան» (առանց հիշատակագրության)³²:

«Քարոզգիրք» (առանց հիշատակագրության)³³:

«Աւետարան» - Ժամանակ՝ ՌՂԳ. (1644), վայր՝ Նոր Զոդա, գրիչն անհայտ է: Հիշատակարանում գրված է. «Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքն Շօշ ի գիւղս Շուղա»³⁴, ի Հայրապետութեան Հայոց Տեառն Փիլիպպոսի, և առաջնորդութեան մերոյ գիւղս խաչաքարն և Քրիստոսի անմոլոր հետեւողի՝ Տէր խաչատուր...»³⁵: Ավետարանը եղել է արծաթապատ, ոսկեմկար զարդերով և պատկերներով³⁶:

«Ավետարան» - Ժամանակ՝ ՌԺԺԵ (1666), վայր՝ Թիֆլիս, գրիչ՝ Բարսեղ քահանա: Հիշատակարանում գրված է. «...Արդ գրեցաւ և ծաղկեցաւ Սուրբ Աւետարանս յայլ և յայլ գրչաց և ծաղկողաց յերկիրն Թիֆլիսոյ ձեռամբ Տէր Բարսեղ քահանային»³⁷: Ավետարանը հետագայում լրացվել և սրբագրվել է Սարգիս վարդապետի կողմից³⁸:

«Ավետարան» - Ժամանակ՝ ՌԺՆԷ (1698), վայրն ու գրիչը անհայտ է: Հիշատակարանում գրված է, որ Աղվերծու³⁹ Հովհաննես քահանան Ավետարանը 1709 թ., որպես բարեպաշ-

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 246: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրբ է գործել 1960 թ. Նիկոլայ Քալաշյանի դստեր՝ Եկաբերինա Քալաշյանի ժառանգուհի Մարգարիտ Բարայանի միջոցով և պահպանվում է N 9872-թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբարյանցի «Նկարագիր Շամխայոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

³² Տե՛ս նույն տեղում, էջ 64: Ձեռագիրն այսօր գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրբ է գործել 1912 թ. և պահպանվում է N 4011 թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբարյանցի «Նկարագիր Շամխայոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

³³ Տե՛ս նույն տեղում: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրբ է գործել 1912 թ. և պահպանվում է N 3827 թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբարյանցի «Նկարագիր Շամխայոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

³⁴ Շոշը՝ հնկարգայի Սպահան քաղաքն է. «Շոշոյ՝ ոյր այժմ ասի Ըսպահան» (Թովմեան Յ., Ցուցակ ձեռագրաց խաչիկ վարդապետի Դաղեսանի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 34): Ոստի, Զոդա գյուղը՝ Շահ Արախի 1605 թ. բռնագաղթից հետո Սպահանի մոտ հիմնված Նոր Զոդան է:

³⁵ Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սրբիմանեսի վանաց Սաղիանի, էջ 240-241: Հմմտ. նույնի՝ Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երևանից և շրջակայից նորա, էջ 221:

³⁶ Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրբ է գործել 1925 թ. Բաբլի և Թուրքեստանի առաջնորդարանի միջոցով և պահպանվում է N 6665 թվահամարում (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբարյանցի «Նկարագիր Շամխայոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

³⁷ Բաբլուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, էջ 176: Հմմտ. Սմբարյանց Մ., Նկարագիր Սուրբ Սրբիմանեսի վանաց Սաղիանի, էջ 240:

³⁸ Տե՛ս նույն տեղում: Ձեռագիրն այսօր գտնվում է Մաշտոցի անվան Մարենաղարանում: Մուրբ է գործել 1925 թ. Բաբլի և Թուրքեստանի առաջնորդարանի միջոցով և պահպանվում է N 6414 թվահամարի ներքո (տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպս. Սմբարյանցի «Նկարագիր Շամխայոյ թեմի» գրքում հիշարակված ձեռագրերը, էջ 47):

³⁹ Աղվերծը Սր. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում հիշարակված Ըղուերծն է (ներկայիս Սյունիքի մարզի Սիսիանի շրջանի Դարբաս գյուղը): Ձեռագիր աղբյուրներում հանդիպում է նաև Աղուերծ, Ըղուերծ, Օղվերծ, Յղուերծ ձևերով: Աղվերծում նշանավոր գրչօջախներ են եղել Ս. Ասրվաձաձին (1272 թ. կառուցել է Տաթայիճ Օրբելյան իր կնոջ՝ Միլա խաթունի հետ միասին (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Գորիսի, Սիսիանի և Ղաթիանի շրջաններ, կազմեց՝ Ս. Բաբլուտարյան, Երևան, 1960, էջ 11) և Ս. Սրբիմանես Նախապկա եկեղեցիները (տե՛ս Ղաթապակարանը Շուշիի և շրջակայից (Ազուլիս, Գանձասարայ վանք, Նուխի) գրչհայ մարտնից:

տական մվեր, համաձայն է անապատի Ս. Աստվածածին եկեղեցուն. «Ի Ռժիսէ թվին Աղուէր-ծու Յովհաննէս քահանայն վախմ տվեց Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն անապատի»⁴⁰:

Վանքում պահվող ձեռագրերի այդ քանակությունը և նրանց գրչագրման վայրը ապացուցում են այն իրողությունը, որ վանքն իր հիմնադրումից ի վեր գիտամշակութային սերտ համագործակցության մեջ է գտնվել Հայաստանում գործող գրչության այլ օջախների հետ: Ի շարս վերոնշյալ ձեռագրերի, վանքն ունեցել է ման տպագիր հմատիպ գրքեր: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կազմած վերոնշյալ գույքացուցակում թվարկվում են ման հետևյալ գրքերը՝ Գրիգոր Տաթևացու՝ «Գիրք հարցմանց»-ը, Սահակ քահանայի «Բնական կրօնագիտութիւն»-ը, «Մեկնութիւն մարեկեան աղօթից», «Աստուածաշունչ» (տպագրված Ս. Պետրբուրգում), «Աւետարան» (տպագրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնում), «Ժամագիրք Ատենի» (երկու հատ), «Խորհրդատետր», «Ընաշոց», «Մաշտոց», «Օարական Ատենի» (երեք հատ) և Ղ. Ալիշանի «Այրարատ»-ը⁴¹:

Հարկ է նշել, որ Օսմախու հայոց թեմի գրչօջախներում պահված և մեզ հասած ձեռագրերը երբեմնի գրչագիր ժառանգության բեկորներն են միայն: Գրաւմների հարուստ ժողովածուների մի զգալի մասը ժամանակի ընթացքում մպատակադրված ձևով ոչնչացվել և կրակի ճարակ են դարձել, կողոպտվել և գերեվարվել են երկրամաս խուժած վաչկատուն ցեղերի ասպատակությունների պատճառով, իսկ մեծ թվով ձեռագրեր էլ կորել կամ ոչնչացել են անխնամ մնալու պատճառով և չեն հասել մեզ:

Ընդօրինակիչը՝ Արիստակէս վրդ. Սնդրակեան և Սիմէոն քին. Տէր-Պողոսեան: Մարենադարան, Այլ վայրերի ձեռագրերի լուսապարճների հավաքածու, թիվ 170, էջ 47):

⁴⁰ Տէն Մմբարունաց Մ., Նկարագիր Սուրբ Սրբկաննոսի վանաց Մաղիանի, էջ 62, 241: Վմմբ. Լույնի՝ Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երեւակայ և շրջակայից Լորա, էջ 221: Ձեռագրի հնգագա ճակարագիրն անհայտ է:

⁴¹ Տէն Մմբարունաց Մ., Նկարագիր Սուրբ Սրբկաննոսի վանաց Մաղիանի, էջ 64: